թիւնն եէնիչերեաց և խաղաղելոյ զքաղաքն, մնաց յԵրուսաղէմ զօրօք իւրովք ըստ հրամանի Կուսակալին և 'ի սադրելոյ Յունաց. եւ զկնի աւուրց ինչ սկսաւ հակառակիլ ընդ Հայս և այս՝ 'ի դրդմանէ Յունաց. արգել զերկաթի կոչնակն Ս. Յակոբայ, և հրամայէր մխիթարիլ միայն փայտեայ կոչնակաւ. խափանեաց զպատարագելն Հայոց 'ի վերայ դերեզմանի Ս. Աստուածածնի, զոր կատարէին 'ի չորեքշաբթի, 'ի կիւրակէի եւ յաւուրս տօնախմբութեան Ս. Կուսին. այլ միայն երկիցս 'ի շաբաթու պատարագել ասէր, և այն 'ի վերայ արտաքին խորանին։ Թէպէտեւ Հայք առաքեցին զմանս հարցանել ցՅոյնս զպատճառն, այլ նոքա արարին պատասխանի թէ 'ի Կոստանդինուպոլիս այնպէս կարգադրեալ են. և առաջին հրովարտակին, զոր մատուցին Հայք, ոչ կամեցան լսել դատաւորք, եւ այս եղեւ յետ գալստեան հրովարտակին Յունաց, զոր ընթերցաւ Խոնաքեանն ըստ կամաց իւրոց եւ դարձոյց առ նոսա։

Արժան համարիմ ստանոր յառաջ բերել զանպատեհ գործս Խոնաքեանին, զոր սկսաւ յանդգնաբար գործել յԵրուսաղէմ. քանզի 'ի քննութեան պահու տաճարին Ս. Յարութեան գնացեալ էր անդ և Աւետիս Թարգմանն Հայոց, յանկարծ յարձակեալ 'ի վերայ նորա և սկսաւ նախատել զազգն ողջոյն եւ հարկանել զնա բռնցի. միթէ՞զդ ինչ լցեն Հայք՝ զի Նախարարք Տէրութեանն վարեցին 'ի Դրանէ զմեծամեծս նոցա, և զիս Տէրութիւնն ոստիկան և դատաւոր կարգեաց 'ի վերայ երից ազգաց։ Մեծամեծք այլազգեաց նախատէին զյանդգնութիւնս նորին եւ սաստէին իսկ լռել։ Թարգմանն զամօթի հարեալ առաջի բազմութեանն, և չկարացեալ ասել ինչ՝ դարձաւ 'ի վանքն, և առաքեաց անդ զերկրորդ իւր։ Զայն տեսեալ Խոնաքեանին կալաւ զնա 'ի հրապարակի դաւթի տաճարին՝ ձաղէր զնա այպանօք և հարկանէր գաւազանաւ զգլուխս նորին, և ելեալ 'ի վերնատունն Հայոց գոռայր անտի իբրեւ ամպ մրրկալից՝ թէ Հայք չունին տեղի ինչ ատ, եւ այսպէս արար խայտառակութիւն մեծ, ժայթքելով 'ի բերանոյ իւրմէ՝ բանս նախատանաց և լուտանաց ընդդէմ պատուոյ ազգին, յորմէ զուարթանային